ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_2_" _հունիսի_ 2014թ № _89 Ա_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՒԴԵՄՆԻՍ, ԿՈՒՐԻՍ, ԿԱՐՃԵՎԱՆ, ՇՎԱՆԻՁՈՐ, ՆՈՆԱՁՈՐ ԵՎ ՔԱՋԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՅԻՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի բ) ենթակետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 12-ի «ՀՀ քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 624 որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի դրույթների և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի քաղաքային և գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության պլանային ստուգումներ անցկացնելու նպատակով հանձնաժողովի կազմը, ստուգման ժամանակացույցը և առաջադրանքը հաստատելու մասին» N128 «Ա» որոշմամբ Սյունիքի մարզի Գուդեմնիս, Կուրիս, Կարճևան, Շվանիձոր, Նոնաձոր և Քաջարան գյուղական համայնքներում քաղաքաշինական գործունեության ոլորտում կատարված պլանային ստուգումների արդյունքներով կազմված արձանագրությունների, **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Քաղաքաշինական գործունեության բնագավառում Գուդեմնիս, Կուրիս, Կարճևան, Շվանիձոր, Նոնաձոր և Քաջարան գյուղական համայնքներում առկա խնդիրներին սահմանված կարգով լուծում տալու նպատակով համայնքների ղեկավարներին առաջարկել.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել համայնքի վարչական տարածքում հողահատկացման, ճարտարապետահատակագծային առաջադրանքների և շինարարության թույլտվությունների տրամադրման, դրանց նախագծերի հաստատման, համաձայնեցման, ինչպես նաև ինքնակամ շինարարությունների կասեցման և դրանց հետևանքների

վերացման ուղղությամբ տարվող գործընթացները՝ ապահովելով քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարումը.

2) Համայնքի ավագանու նիստում քննարկել քաղաքաշինական գործունեության պլանային ստուգման արդյունքները և ձեռնարկված միջոցների մասին տեղյակ պահել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2014թ. հունիսի 2
ք. Կապան